ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Դվին,Հակոբ Դվնեցի 17
Հեռ:/ 60067/

С. Двин, Акоб Двнеци 17
Тел: / 60067

ՈՐՈՇՈՒՄ թիվ 26-Ն

13.12.2011 թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Ղեկավարվելով՝ "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվաի 18-րդ կետի և "Տեղական տուրքերի և վճարների մասին" ՀՀ օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների պահանջներով՝

Ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների/ ներառյալ ոչ հիմնական/ շինարարության/տեղադրման/ թույտվության համար տեղական տուրքը սահմանվում է .

Հիմնական օբյեկտների համար

ա/ մինչև 300 քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի , այդ թվում այգեգործական/ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար տեղական տուրքը սահմանել - 7500 դրամ:

բ/ սույն կետի ա/ ենթակետով չնախատեսված օբյեկտների համար:

բ.ա/ 201 քմ-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմանել - 15000 դրամ:

բ.բ/ 501 քմ-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմանել - 25000 դրամ:

բ.գ/ 1001 քմ-ից ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմանել - 35000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

գ/ մինչև 20 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար – 1500 դրամ:

դ/ 20 և ավելի քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար– 2500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգման, արդիականացման աշխատանքների/բացառությամբ << օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերր/ համար, եթե սահմանված կարգով հաստատված է ճանապարհաշինարարական նախագծով:

ա/ չի նախատեսվում կցակառույցների , վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափսերն ընդլայնող այլ կառույցների/ այդ թվում ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության , տեղական տուրքը սահմանել – 1500 դրամ:

բ/ բացի օբյեկտի վերակառուցման,ուժեղացման վերականգնման կամ արդիականացման աշխատանքերից, նախատեսվում են նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի /ա/ ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի առաջին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով:

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի առաջին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել–2500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է

1.Ոգելիչ խմիչքների , վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար – 2500 դրամ:

2.Ծխախոտր արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար – 2500 դրամ:

5. Համայնքի տաարծքում

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար – 350 դրամ

բ/ հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների , հեղուկացված գազերի,մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների , հեղուկացված գազերի վաճառքի համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է

– 150000 դրամ:

6.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 1000 դրամ:

7.Համայնքի տարածքում /բացառությամբ թաղային համայնքների/ մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է

- 10000 դրամ:

8. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

Առևտրի համար - 25000 դրամ:

9. 1,2,3 կետերի համար կիրառվել է 0.5 գործակիցը:

10.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար – 2000 դրամ:

Ավագանի՝ Գ.Բարեղամյան - կողմ

Հ.Նազարյան - կողմ

Ա.Ղազարյան - կողմ

Գ.Սահակյան - կողմ

Կ.Դավթյան - կողմ

Ա.Գրիգորյան - կողմ

Համայնքի ղեկավար *Ա. Աբրահամյան*

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.Դվին,Հակոբ Դվնեցի 17
Հեռ:/ 60067/

С. Двин, Акоб Двнеци 17
Тел: / 60067

№ 197

ՈՐՈՇՈՒՄ թիվ 27-Ն

16.12. 2011 թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով՝ "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի պահանջներով՝

Ավագանին որոշում է.

Հաստատել համայքնի ղեկավարի աշխատակազմի և մանկապարտեզի հաստիքային ցուցակները:

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

1. Գյուղապետ		– 130000 դրամ
2. Տեղակալ	1 միավոր	- 100000 դրամ
3. Քարտուղար	-1 միավոր	– 104000 դրամ
4. Գլխ. մասնագետ	-1 միավոր	– 103000 դրամ
5. Առաջատար մասն.	-1 միավոր	-- 88000 դրամ
6. Առաջատար մասն.	-1 միավոր	– 88000 դրամ
7. 1-ին կարգի մասն.	-1 միավոր	– 83000 դրամ
8. 2-րդ կարգի մասն.	-1 միավոր	– 78000 դրամ
8. Մշակույթի և սպ. կազմ.	-1 միավոր	– 70000 դրամ
9 .Մշակույթի տան վարիչ	-1 միավոր	– 45000 դրամ
10. Գեղմասվար	-1 միավոր	– 40000 դրամ

11. Գրադարանավարուհի -1 միավոր – 40000 դրամ

12. Հավաքարար -1 միավոր – 50000 դրամ

Ընդամենը՝ 1019000 /մեկ միլիոն տասնինը հազար/ դրամ

ԴՎԻՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

1	Վարիչ	67000 դրամ
2	Դաստիարակ	65000 դրամ
3	Դաստիարակ	65000 դրամ
4	Դայակ	40000 դրամ
5	Դայակ	40000 դրամ
6	Հաշվապահ/գործավար/	50000 դրամ
7.	Խոհարար	45000 դրամ
8.	Խոհարարի տեղակալ	35000 դրամ
9	Երաժշտական դաստիարակ /գանձապահ/	50000 դրամ
10.	Լվացքարար	35000 դրամ
11.	Օժանդակ բանվոր	35000 դրամ
12.	Պահակ	35000 դրամ
13.	Բուժքույր	35000 դրամ

Ընդամենը՝ 597 000 /հինգ հարյուր իննսունյոթ հազար/ դրամ

Ավագանի՝

Գ.Բարեղամյան -

Հ.Նազարյան -

Ա.Ղազարյան -

Գ.Սահակյան -

Կ.Դավթյան -

Ա.Գրիգորյան -

Համայնքի ղեկավար Ա. Աբրահամյան

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.Դվին,Հակոբ Դվնեցի 17
Հեռ:/ 60067/

С. Двин, Акоб Двнеци 17
Тел: / 60067

N 198.

ՈՐՈՇՈՒՄ թիվ 28-Ն

16.12. 2011 թ.

2012 թ. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով՝ "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով՝

Ավագանին որոշում է.

Հաստատել 2012 թվականի համայնքի բյուջեի

2012 թ. համայնքի բյուջեի նախագծի հաստատման հարցը: Զեկուցողը նշեց,որ 2012 թ. եկամուտների ընդհանուր գումարը կազմում է 42642.9 հազ. դրամ

1. Հարկեր և տուրքեր - 11373.0 հազ. դրամ
2. Պաշտոնական դրամաշնորհ/դոտացիա/ - 27972.9 հազ. դրամ
3. Այլ եկամուտներ - 3300.0 հազ. դրամ

Զեկուցողը նշեց , որ ծախսային մասն նույնպես կազմում է 42642.9 հազ. դրամ:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ – 17816.0 հազ.դրամ

Հոդված 4111 – Աշխատողների աշխատավարձ - 12500.0 հազ.դրամ:

Աշխատավարձը հաշվարկվում է գյուղապետարանի աշխատակազմի հաստիքային ցուցակների հիման վրա:

Հաստիքային միավորների թիվը կազմում է 13 միավոր: Ամսեկան աշխատավարձը կազմում է 1019.0հազ. դրամ: Ընդամենը 1019.0 * 12 = 12228.0 հազ. դրամ: Արձակուրդայինի տարբերությունը գումարելով կստացվի 12500.0հազ. դրամ:

Հոդված 4131 – Սոց.ապահովության վճար - 2700.0 հազ. դրամ:
Աշխատավարձի սոց. վճար՝ 2700.0 հազ.դրամ: Սոց.վճարի հաշվարկը կատարված է կենսաթոշակային ֆոնդի դրույքաչափերով, որը կազմում է 2700.0 հազ. դրամ

Հոդված 4212 – Էներգետիկ ծառայություններ - 500.0 հազ. դրամ:
Ծախսը նախատեսվում է գյուղապետարանի էներգամատակարարման և ջեռուցման համար՝ համաձայն էլ. ցանցի փոխադարձ ակտի, որը կազմում է - 500.0 հազ. դրամ:

Հոդված 4213 – Կոմունալ ծառ./ջրամատակար./ - `250.0 հազ. դրամ:
Ծախսը նախատեսվում է ջրամատակարարման համար /ջրմուղից օգտվելու համար, համաձայն փոխադարձ ակտի/: Ծախսը կազմում է - 250.0 հազ. դրամ :

Հոդված 4214 – Կապի ծառայություն - 250.0 հազ. դրամ:
Ծախսը նախատեսված է հեռախոսների աբոնենտային և խոսակցական ծախսերի համար՝ համաձայն փոխադարձ ակտի :
Հեռախոսի ծախս՝ 150.0 հազ. դրամ
Ինտեռնետ՝ 100.0 հազ. դրամ:

Հոդված 4215 - Ապահովագրական ծախսեր - 26.0 հազ. դրամ
Ծախսը նախատեսվում է գյուղապետարանի ծառայողական մեքենայի ապավոգրման համար, որը կազմում է 26.0 հազ. դրամ:

Հոդված 4221 – Ներքին գործուղում - 70.0 հազ. դրամ:
Ծախսը նախատեսվում է գյուղապետարանի աշխատակիցների գործուղման ծախսերի համար: Ծախսը կազմում է - 70.0 հազ. դրամ:

Հոդված 4232 – Համ.ծառայություն - 35.0 հազ. դրամ
Ծախսը նախատեսվում է համակարգչում իրավական ակտերի տեղադրման համար:

Հոդված 4234 – Տեղեկատվական ծառայություն - 200.0 հազ. դրամ:
Ծախսը նախատեսվում է Արտաշատ, Արարատ, Հայաստանի Հանրապետություն և 02 շաբաթաթերթին բաժանորդագրման համար, որը կազմում է -200.0 հազ. դրամ:

Հոդված 4261 – Գրասենյակային նյութեր - 350.0 հազ. դրամ:

Ծախսը նախատեսվում է վարչական նյութերի /գրասենյակային պիտույքներ/ ձեռք բերման համար, որը կազմում է - 350.0 հազ. դրամ:

Հոդված 4264 – Տրանսպորտային նյութեր - 700.0 հազ. դրամ

Ծախսը նախատեսվում է գյուղապետարանի ծառայողական մեքենայի վառելիքի ձեռք բերման համար:

Ավտեպահեստամասեր՝ - 200.0 հազ. դրամ

Բենզին - 500.0 հազ. դրամ

Հոդված 4267– Կենցաղային նյութեր - 120.0 հազ. դրամ

Նախատեսված է գյուղապետարանի կենցաղային /մաքրիչ նյութեր/ և տնտեսական ապրանքների գնման համար:

Կենցաղային –60.0 հազ. դրամ

Տնտեսական – 60.0 հազ. դրամ

Հոդված 4269 – Հատուկ նպատակային այլ ապրանքներ- 100.0 հազ. դրամ

Ծախսը նախատեսված է օդափոխիչներ գնելու համար:

Հոդված 4823– Պարտադիր վճարներ - 15.0 հազ. դրամ

Ծախսը նախատեսված է ծառայողական ավտոմեքենայի տեխնիկական զննման համար:

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ – 13600.0 հազ. դրամ

Հոդված 4239 – Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ - 13600.0 հազ. դրամ

Ծախսը նախատեվում է համայնքի մանկապարտեզի կարիքների համար:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ – 1700.0 հազ. դրամ

Հոդված 4239 – Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ – 900.0 հազ. դրամ

Ծախսը նախատեսված է մշակութային միջոցառումներ կազմակերպելու համար, որը կազմում է 900.0 հազ. դրամ՝ համաձայն մշակութային ծրագրի:

Հոդված 4269 – Հատուկ նպատակային այլ ապրանքներ – 800.0 հազ. դրամ

Ծախսը նախատեսված է մշակութային միջոցառումներ կազմակերպելու համար անհրաժեշտ ապրանքների գնման համար՝ համաձայն մշակութային ծրագրի որը կազմում է 800.0 հա. դրամ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ - 800.0 հազ. դրամ

Հոդված 4212 – Էներգետիկ ծառայություն - 800.0 հազ. դրամ

Ծախսը նախատեսվում է փողոցների լուսավորության և լուսավորության պարագաներ ձեռք բերելու համար:

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ – 1750.0 հազ. դրամ

Հոդված 4213 Կոմունալ ծառայություն - 1750.0 հազ. դրամ

Ծախսը նախատեսվում է համայնքում աղբահանություն իրականացնելու համար՝ համաձայն պայմանագրի:

ՄԱՅՐՈՒՂԻՆԵՐԻ ԵՎ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՎ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ - 750.0հազ. դրամ

Հոդված 4251 –Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում - 750.0հազ. դրամ

Ծախսը նախատեսվում է համայնքի փողոցների հարթեցման և ավազակոպճապատման համար:

ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԵՏ. – 100.0 հազ. դրամ

Հոդված 4241 – Մասնագիտական ծառայություն - 100.0 հազ. դրամ

Ծախսը նախատեսվում է վկայականներ ձեռք բերելու համար՝ 100.0 հազ. դրամ :

ՀԱՐԱԶԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԱՆՁԻՆՔ – 700.0 հազ. դրամ

Հոդված 4726 – Հուղարկավորության նպաստներ բյուջեից - 700.0 հազ. դրամ

Ծախսը նախատեսվում է հարազատին կորցրած անձանց ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար:

ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԱՆՁԱՆՑ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ – 2500.0 հազ. դրամ

Հոդված 4729 - Այլ նպաստներ բյուջեից - 2500.0 հազ. դրամ

Ծախսը նախատեսված է անապահով ընտանիքներին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՊԱՏՎԱՍՏՈՒՄ – 600 հազ. դրամ

Հոդված 4241 – Մասնագիտական ծառայություններ - 600.0 հազ. դրամ

Գումարը նախատեսվում է անասնաբուժական ծառայությունների համար՝ համաձայն պայմանագրի:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ – 300.0 հազ. դրամ

Հոդված 4819 – Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին – 300.0 հազ. դրամ:

Ծախսը նախատեսված է հասարակական կազմակերպություններին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – 28.0 հազ. դրամ

Հոդված 4235 –Կառավարչական ծառայություն - 28.0 հազ. դրամ

Այն իր մեջ ներառում է՝

Համայնքային միությանը տրամադրելու համար՝ 28.0 հազ. դրամ:

ԿԱՐԻՔԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔ. ԲԱՐՁՐ. ԿՐԹՈՒԹ. ՍՏ. ԵՐԵԽ. ՈՒՍՄ. - 300.0 հազ. դր.

Հոդված 4729 - Այլ նպաստներ բյուջեից – 300.0 դրամ

Ծախսերը նախատեսված է կարիքավոր ընտանիքների երեխաների բարձրագույն կրթություն ստանալու ուսման վարձը տալու համար:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ /այլ դասերի չպատկանող/ - 250.0 հազ. դրամ

Հոդված 4637 – Ընթացիկ դրամ. պետական և համ. ոչ առևտրային կազմ. – 250.0 հազ. դրամ

Ծախսը նախատեսված է համայնքի դպրոցին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար:

ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ – 1448.9հազ. դրամ

Վարչական բյուջեի պահուստային միջոցներ - 1448.9 հազ. դրամ

Ավագանի՝

Գ.Բարեղամյան -

Հ.Նազարյան -

Ա.Ղազարյան -

Գ.Սահակյան -

Կ.Դավթյան -

Ա.Գրիգորյան

Համայնքի ղեկավար Ա. Աբրահամյան